



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ, ք. Երևան, Թրիխյան խճ. 3/9, հեռ. /010/ 20-10-93

ՌԴԴ 8.1 Ե-617/14

« 29 » հունվարի 2014թ.

*«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի  
գրասենյակ» հասարակական կազմակերպությանը  
/հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59/*

Սույն գրությանը կից ուղարկվում է թիվ ՎԴ- 10973/05/13 վարչական գործով վերաքննիչ բողոքը մերժելու մասին Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի 23.01.2014թ. որոշումը:

Առդիր՝ դատարանի որոշումը «/» թերթից:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱԲՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Գործ թիվ ՎԳ/10973/05/13

« 23 » հունվարի 2014թ.

ք. Երևան



Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՎԵՐԱԲՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), (դատավոր Ա.Առաքելյան), քննելով ըստ հայցի «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ընդդեմ Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի Մաքսային միությանը միանալուն ուղղված գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, թիվ ՎԳ/10973/05/13 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 27.11.2013 թվականի որոշման դեմ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը,

Պ Ա Ր Չ Ե Յ

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի Մաքսային միությանը միանալուն ուղղված գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի /դատավոր՝ Կ.Ավետիսյան/ 2013 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Չհամաձայնվելով նշված որոշմանը՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը 2013թ. դեկտեմբերի 17-ի փոստային առաքմամբ ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Թիվ ՎԳ/10973/05/13 վարչական գործը Վերաքննիչ դատարան է մուտքագրվել 25.12.2013թ. և նույն օրը հանձնվել է դատավոր Ա.Առաքելյանին:

Վերաքննիչ դատարանի /դատավոր՝ Ա.Առաքելյան/ 27.12.2013 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

**2. Բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

**1. Գործի դատավարական նախապատմությանը.**

1.1 2013 թվականի նոյեմբերի 26-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ պահանջելով ճանաչել ոչ իրավաչափ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի 2013թ. սեպտեմբերի 3-ի Մաքսային միությանը միանալուն ուղղված գործողությունները (անգործությունը):

1.2 2013թ. նոյեմբերի 27-ին Դատարանը կայացրել է որոշում՝ կազմակերպության կողմից ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժելու մասին:

Որոշումը կողմը ստացել է 2013 թվականի դեկտեմբերի 4-ին:

**2. Դատարանի եզրահանգումները.**

Դատարանը գտել է.

«(...) Նման պայմաններում պարզ է դառնում, որ հանրապետության Նախագահի նշված լիազորությունների իրականացման ընթացքում ձեռնարկված գործողությունները դուրս են վարչադատական վերահսկողության շրջանակներից, քանի որ դրանք, ինչպես նշվեց վերը, դատական վերահսկողության են ենթարկվում հատուկ ընթացակարգով սահմանադրական արդարադատության սահմաններում: Ընդ որում, հարկ է նկատել, որ վարչական արդարադատությունը (ի տարբերություն սահմանադրական արդարադատության) օժտված է բացառապես կոնկրետ վերահսկողության լիազորությունով և չի իրականացնում վերացական վերահսկողության գործառույթ: Այսինքն, որևէ

պետական մարմնի կամ պաշտոնատար անձի գործունեությունը կարող է ենթարկվել վարչադատական վերահսկողության միայն այն պարագայում, եթե այն միջամտում է մարդու սուբյեկտիվ իրավունքներին և ազատություններին: Նշված հայեցակարգը բխում է Հայաստանի հանրապետության Սահմանադրության 18-19-րդ հոդվածներին համահունչ ընդունված Հայաստանի հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածից: Իսկ հանրապետության Նախագահի միջազգային պայմանագրեր կնքելու լիազորությունը ոչ թե կրում է մարդկանց հանրային սուբյեկտիվ իրավունքների կոնկրետ կարգավորմանն ուղղված վարչական բնույթ, այլ հանդիսանում է պետության արտաքին քաղաքականության մշակման և ղեկավարման վերացական գործառույթ:

Այսպիսով, միջազգային պայմանագրեր կնքելու և դրանց շուրջ բանակցություններ վարելու հանրապետության Նախագահի լիազորության իրագործման միջոցով պետության արտաքին քաղաքականության ղեկավարման գործառույթը և դրանից բխող առանձին գործողությունները ենթակա չեն վարչադատական վերահսկողության, դրանք ենթարկվում են զսպման և հակակշռման ուրույն կառուցակարգերով:

Ամբողջ վերը նշված վերլուծության և եզրահանգման հիման վրա դատարանը փաստում է, որ ներկայացված հայցը, որով վիճարկվում են Հայաստանի հանրապետության Նախագահի գործողությունները, ենթակա չէ դատարանում քննության:

Հետևապես դատարանը գտնում է, որ հայցադիմումի ընդունումը պետք է մերժել քանի, որ Հայաստանի հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության» (...):

### **3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը**

Դատարանի այն պատճառաբանությունում, որ կազմակերպության կողմից ներկայացված հայցը վարչական դատարանում քննության ենթակա չէր կայանում է հետևյալում.

«Ընդ որում, հարկ է նկատել, որ վարչական արդարադատությունը (ի տարբերություն սահմանադրական արդարադատության) օժտված է բացառապես կոնկրետ վերահսկողության լիազորությունով և չի իրականացնում վերացական վերահսկողության գործառույթ: Այսինքն, որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի գործունեությունը կարող է ենթարկվել վարչադատական վերահսկողության միայն այն պարագայում, եթե այն միջամտում է մարդու սուբյեկտիվ իրավունքներին և ազատություններին: Նշված հայեցակարգը բխում է Հայաստանի հանրապետության Սահմանադրության 18-19-րդ հոդվածներին համահունչ ընդունված Հայաստանի հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածից: Իսկ հանրապետության Նախագահի միջազգային պայմանագրեր կնքելու լիազորությունը ոչ թե կրում է մարդկանց հանրային սուբյեկտիվ իրավունքների կոնկրետ կարգավորմանն ուղղված վարչական բնույթ, այլ հանդիսանում է պետության արտաքին քաղաքականության մշակման և ղեկավարման վերացական գործառույթ»:

3.1. Նշված մեկնաբանությամբ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները և սխալ է մեկնաբանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, իսկ 19-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Հայաստանի հանրապետության կողմից 2002 թվականի ապրիլի 26-ին վավերացված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, որը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի բաղադրիչներից մեկն է դատարան դիմելու իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների: Բայց և այնպես, կիրառվող սահմանափակումները չպետք է նեղացնեն կամ նվազեցնեն անձի իրավունքներն այնպես կամ այն աստիճան, որ թուլացնեն իրավունքի բուն էությունը: Ընդ որում, սահմանափակումն անհամատեղելի կլինի 6 հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և, թե չլինի ողջամիտ հավասարակշռության կապ գործադրված միջոցների և հետապնդվող նպատակի միջև:

Դատարանի կողմից հայցադիմումի ընդունումը մերժելու արդյունքում խախտվել է կամ սահմանափակվել է կազմակերպության դատարան դիմելու և դատարանում լավամ լինելու իրավունքը:

3.2. Ինչ վերաբերվում է դատարանի այն պատճառաբանությանը, թե հայցադիմումի վարույթ չընդունելը բխում է ՀՀ վարչական դատավարարության օրենսգրքի 3-րդ հոդվածից անհիմն է և առարկայագուրկ հետևյալ պատճառաբանությամբ և հիմքերով.

ՀՀ Սահմանադրական դատարանը 2010թ. սեպտեմբերի 7-ին թիվ 906 որոշման 7-8-րդ կետերում ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարական և իրավական պետության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում հասարակական կազմակերպությունների՝ պետությունում ունեցած դերի և նշանակության մասին արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«Քաղաքացիական հասարակությունն ինքնուրույն և պետությունից անկախ հասարակական մեխանիզմների և հարաբերությունների համակարգ է, որը պայմաններ է ապահովում կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջմունքների բավարարման համար: Քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող սոցիալական կառուցակարգերի շրջանակում ուրույն տեղ են զբաղեցնում հասարակական կազմակերպությունները: Վերջիններիս դերն ինքնանպատակ չէ, քանի որ նախ միավորումների գործունեությունը նախատեսված է Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, երկրորդ հասարակական կազմակերպություններն ունեն կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջմունքների իրացմանը, այդ թվում հանրային կառավարմանը մասնակցելու գործառույթ, երրորդ՝ հասարակական կազմակերպությունների միջոցով է, որ հասարակությունը հնարավորություն է ստանում հասարակական հսկողություն և վերահսկողություն սահմանել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ: Այս հանգամանքը, հատկապես կարևորվում է այն պարագայում, երբ առկա է ոչ թե անհատի, այլ իրավունքի կոլեկտիվ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքների կամ օրինական շահերի խախտում:

Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը հաշվի առնելով *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները:

Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետության, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության՝ բաղադրատարրը հանդիսացող հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը: Այս դիրքորոշումը համահունչ է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում»:

Վերը վկայակոչված իրավական մեկնաբանությունից կարելի է պնդել, որ հասարակական կազմակերպությունը, որի տեսլականն է՝ «Մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն» և ռազմավարական նպատակները բխում են տեսլականից կարող է ՀՀ նախագահի գործողությունների (որոնք անբարենպաստ պայմաններ են ստեղծում ՀՀ ողջ ժողովրդի համար) իրավաչափությունը վիճարկելը վարչական դատարաններում:

3.3. Դատարանի այն պատճառաբանությունը, որ «հանրապետության Նախագահի միջազգային պայմանագրեր կնքելու լիազորությունը ոչ թե կրում է մարդկանց հանրային սուբյեկտիվ իրավունքների կոնկրետ կարգավորմանն ուղղված վարչական բնույթ, այլ հանդիսանում է պետության արտաքին քաղաքականության մշակման և ղեկավարման վերացական գործառույթ» չի բխում սույն իրավիճակից և Կազմակերպության կողմից ներկայացված հայցադիմումի բովանդակությունից:

3.3.1 Այսպես՝ ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմիններ են «Հայաստանի հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները»:



ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի մեկնաբանությունը տրված է 2010թ. ապրիլին հրատարակված «ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ» գրքում, վկայակոչված գրականության մեկնաբանության արդյունքում, հեղինակները եկել են այն եզրակացության, որ «հանրապետության Նախագահը գործադիր իշխանության կրողներից մեկն է, իսկ նրա կարգավիճակը՝ որպես պետության գլուխ, և նրա հետ կապված տարբեր խնդիրները և գործառնությունները հիմնականում ներդաշնակ են կիսանախագահական կառավարման մոդելում գործող իշխանությունների բաժանման յուրահատկություններին:

Տվյալ մեկնաբանությունը թույլ է տալիս պնդելու, որ ՀՀ նախագահի պաշտոնը վարչական է և իսկզբանե նրա կողմից իրականացվում է վարչարարություն, ուստի նրա գործողությունները կամ անգործությունը ենթակա է վիճարկման ՀՀ վարչական դատարանում:

3.3.2 Կազմակերպության կողմից ներկայացված հայցն ընդդեմ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի սեպտեմբերի 3-ի գործողությունների իրավաչափությունը, ուղղված Մաքսային միությանը միանալու կրում էր հանրության սուբյեկտիվ իրավունքների կոնկրետ կարգավորմանն ուղղված վարչական բնույթ հետևյալ պատճառաբանությամբ և հիմքերով.

Կազմակերպության կողմից ներկայացված հայցադիմումում առկա էին պնդումներ այն մասին, որ Մաքսային միությանը միանալու մասին ՀՀ նախագահի գործողությունները ուղղված պայմանագիր կնքելուն, ՀՀ համար անբարենպաստ պայմաններ են ստեղծում, որը հիմնականում ուղղված է ՀՀ ինքնիշխանության կորստին:

Ներկայացված հայցադիմումում պատճառաբանությունները կայանում էին հետևյալում.

Մաքսային միությանը միանալու վերաբերյալ պետությունների իրավունքները և պարտականությունները սահմանված են 2000թ. հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական միության ստեղծման համաձայնագրում» վկայակոչված համաձայնագրի 13-րդ հոդվածում սահմանված է՝ « (...) յուրաքանչյուր պայմանավորվող կողմի ձայների քանակը համապատասխանում է իր կողմից Միության բյուջեում ԵվրԱզԵՄ-ի մարմինների պահպանման և մշտական ներկայացուցիչների հանձնաժողովի նիստերի անցկացման համար կատարվող ներդրման մասնաբաժնով, Բելառուս-15 ձայնով, Ղազախստան-15 ձայնով, Ղրղզստան-7.5 ձայնով, Ռուսաստանի Դաշնություն-40 ձայնով, Տաջիկստան-7.5 ձայնով, Ուզբեկստան-15 ձայնով:

Նույն փաստաթղթի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն «Միության բյուջեն ձևավորվում է Միության մարմինների գործունեության ապահովման, Միության մարմինների և ԵվրԱզԵՄ-ի մշտական ներկայացուցիչների հանձնաժողովի նիստերի անցկացման համար մասնաբաժնային ներդրմամբ համաձայն հետևյալ սանդղակի».

Բելառուս-15%, Ղազախստան-15%, Ղրղզստան-7.5%, ՌԴ-40%, Տաջիկստան-7.5%, Ուզբեկստան-15%:

Վերը վկայակոչած իրավական ակտի մեկնաբանությունը թույլ է տալիս պնդելու, որ Մաքսային միության անդամ պետությունները անմիջականորեն կախված են Ռուսաստանի Դաշնությունից նրան տրված 40% ձայների մեծամասնության շնորհիվ:

ՌԴ-ը ունենալով 40% ձայնի իրավունք ցանկացած որոշման կողմ քվեարկելով ընդունվելու է ՌԴ-ի կողմից կողմ քվեարկած որոշումը:

Այսինքն, կարելի է պնդել նաև այն հանգամանքը, որ ՀՀ կողմից Մաքսային միությանը անդամակցելով, Մաքսային միության կողմից կարող են ընդունվել այնպիսի որոշումներ, որոնք իրենց բնույթով անբարենպաստ պայմաններ կստեղծեն ՀՀ քաղաքացիների իրավունքների և ազատությունների համար, դրանք կարող են լինել իմպերատիվ բնույթի, այսինքն՝ պարտադիր կատարման ենթակա, որը ՀՀ և ԵՄ-ի միջև Ասոցացման համաձայնագիր կնքելու շրջանակներում բացակայում էր:

Ավելին, Մաքսային Միությանն անդամակցելու դեպքում Հայաստանը զիջելու է իր ինքնիշխանության մի մասը, որը կարող է էական նշանակություն ունենալ մեր երկրի հետագա քաղաքականության համար: Ինքնիշխանության զիջելու փաստը Ազատություն TV-ի հետ հարցազրույցում հայտարարել է Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Իվան Վոլինկինը:

Ինչ վերաբերվում է ՀՀ և ԵՄ-ի միջև կնքվելիք Ասոցացման համաձայնագրի հետևանքներին՝ ՀՀ փոխարտգործնախարարի՝ Չոհրապ Մնացականյանի Ասոցացման համաձայնագրում Հայաստանի սուվերենության կորստի վերաբերյալ հայտարարություն է.

«Երկու կողմերը պատրաստել են մի մեծ համաձայնագիր, որտեղ չի եղել մի կետ, որ Հայաստանն իր սուվերենությունը հանձնելու է»:

ՀՀ փոխարտգործնախարարի հայտարարությունը, հիմք է տալիս պնդելու, որ ՀՀ և ԵՄ-ի միջև կնքվելիք Ասոցացման համաձայնագիրը միայն կարող էր ՀՀ համար բարենպաստ պայմաններ ստեղծել, իսկ ինչ վերաբերվում է ՀՀ նախագահի հայտարարությանը Մաքսային միությանը միանալու մասին, այն որևէ կերպ պատճառաբանված չէ, թե ինչ պարտավորություններ և իրավունքներ է ստանձնելու ՀՀ-ն՝ միանալով Մաքսային միությանը:

Ինչ վերաբերվում է Մաքսային միությանը միանալուն, ապա որևէ հիմնավորում և պատճառաբանություն առկա չէ, որ այն ավելի քան բարենպաստ պայմաններ կարող է ստեղծել ՀՀ համար, քան ՀՀ և ԵՄ Ասոցացման համաձայնագիր կնքելը, որի վերաբերյալ նաև հետևյալ կերպ է արտահայտվել ՀՀ արտոգործնախարար Էդվարդ Նալբանդյանը azatutyun.am կայք էջում հրապարակմամբ.

Ինչ վերաբերվում է ՀՀ իշխանությունների ակնկալիքներին առ այն, որ Մաքսային միությանը միանալու դիմաց ինչ է ստանալու Հայաստանը Ռուսաստանից ՀՀ արտոգործնախարար Էդվարդ Նալբանդյանը պատասխանել է հետևյալ կերպ. «Խոսքը գնում է ոչ թե ինչ է տվել Ռուսաստանը, որ մենք միանանք Մաքսային միությանը, այլ խոսքը գնում է նրա մասին, որ Հայաստանն ունի դաշնակցային հարաբերություններ Ռուսաստանի հետ (.....)»:

ՀՀ դաշնակցային հարաբերությունները Ռուսաստանի հետ եղել են շատ վաղուց անգամ, երբ ՀՀ որոշում կայացրեց ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիր կնքել տվյալ ժամանակահատվածում նույնպես ՀՀ և ՌԴ միևնույն առկա էր դաշնային հարաբերություններ, ուստի ՀՀ անունից հանդես եկած արտոգործնախարարի հայտարարությունը ընդհանրապես գուրկ է պատճառաբանությունից:

Եվրոպական դատարանը Մոսկվա ընդդեմ Լեհաստանի գործով հայտնել է հետևյալ դիրքորոշումը՝ լավ կառավարման սկզբունքը պահանջում է, որ երբ ինչ-որ մի հանրային հետաքրքրության հարց է նժարին, ապա պետական մարմինները պետք է գործեն լավագույն ժամկետում և լինեն հետևողական: Ցանկալի է, որ պետական մարմինները գործեն մաքսիմալ զգույշ այնպիսի հարցեր որոշելիս, որոնք անձի և անձանց կյանքի համար կարևոր են՝ ինչպիսիք են սոցիալական և նմանատիպ այլ իրավունքները:

Սույն պարագայում ՀՀ նախագահի գործողությունը Մաքսային միությանը միանալու մասին համաձայնագիր կնքելուն չի եղել մաքսիմալ զգույշությամբ, այլ եղել է հապճեպ և չպատճառաբանված, որի արդյունքում ՀՀ կարող է կորցնել իր կարևորագույն, Սահմանադրական արժեքը ինքնիշխանության մի մասը:

3.4. Դատարանի այն պատճառաբանությունը, թե ՀՀ նախագահի գործառույթները հանդիսանում են պետության արտաքին քաղաքականության մշակման և ղեկավարման վերացական գործառույթ՝ չի բխում սույն իրավիճակից և չէր կարող դրվել հայցադիմումը վարույթ ընդունելու հիմքում հետևյալ պատճառաբանությամբ և հիմքերով.

Այն գործողությունը կամ ինչպես Դատարանն է նշում «գործառույթները», որոնք ուղղված են ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության ինքնիշխանության կորստին, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի խախտմանը, չեն կարող լինել վերացական գործառույթներ:

### 3. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Ուսումնասիրելով բողոքը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն ենթակա է մերժման, հետևյալ հիմնավորմամբ:

Հայցվորը պահանջ է ներկայացրել՝ «ճանաչել ոչ իրավաչափ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի 2013թ. սեպտեմբերի 3-ի Մաքսային միությանը միանալուն ուղղված գործողությունները (անգործությունը)»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-69-րդ հոդվածներով բերվում է այն հայցատեսակների սպառնիչ ցանկը, որպիսի հայցեր կարող են ներկայացվել և միայն այդ պարագայում պահանջը կարող է ենթակա լինել ՀՀ վարչական դատարանում քննության:

Վերը նշված հոդվածների բովանդակությունից բխում է, որ վարչական դատարանում լայն իմաստով կարող են վիճարկվել միայն այն ակտերը, որոնք իրենցից ներկայացնում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտեր, ինչպես նաև այն գործողությունները (անգործությունը), որոնք իրենցից ներկայացնում են նույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված վարչարարության գործընթացում տեղի ունեցող գործողություն կամ անգործություն:

Տվյալ դեպքում խոսքը գնում է արտաքին քաղաքականության բնագավառում ՀՀ Նախագահի կողմից իրականացրած գործունեության մասին:

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն Հանրապետության Նախագահը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում, իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, կնքում է միջազգային պայմանագրեր, Ազգային ժողովի վավերացման է ներկայացնում միջազգային պայմանագրեր և ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահը, վարչապետը և արտաքին գործերի նախարարը, առանց

հատուկ լիազորությունների, իրավունք ունեն բանակցություններ վարելու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի շուրջ և ստորագրելու այն:

Նշված դրույթներով հավաստվում է, որ միջազգային պայմանագրեր կնքելու և դրանց շուրջ բանակցություններ վարելու լիազորությունները իրենից ներկայացնում է պետության գլխի (ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդված) հատուկ կարգավիճակից բխող բացառիկ լիազորություն:

Միջազգային պայմանագրերի կնքմանն ուղղված գործողությունների արդյունքը կարող է լինել նշված պայմանագրերի կնքումը:

Վերը նշված՝ ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-րդ կետը նախատեսում է ՀՀ Նախագահի՝ միջազգային պայմանագրերը ՀՀ Ազգային ժողովի վավերացմանը ներկայացնելու իրավասությունը:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի վավերացումը կամ հաստատումը այդ պայմանագրի կնքման փուլ է, որի ընթացքում հայկական կողմից ստորագրված միջազգային պայմանագրի վերաբերյալ սույն օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը համապատասխան որոշում է ընդունում, և այդ հիմքով պայմանագիրը պարտադիր է դառնում Հայաստանի Հանրապետության համար դրա ուժի մեջ մտնելու պահից:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետության ստորագրած միջազգային պայմանագիրը վավերացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ սույն օրենքին համապատասխան: Եվ միայն այս դեպքում դրանք ձեռք են բերում Հայաստանի Հանրապետության համար պարտադիր կատարման ենթակա պայմանագրի ուժ:

Օրենքի 24-րդ հոդվածը սահմանում է վավերացման ենթակա միջազգային պայմանագրերը: Նշված հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ վավերացման ենթակա է նաև ստորագրված այն միջկառավարական պայմանագիրը՝

- 1) որը վերաբերում է մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին.
- 2) որը ֆինանսական պարտավորություններ է նախատեսում Հայաստանի Հանրապետության համար.
- 3) որի կիրառումը նախատեսում է օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորմեր.
- 4) որը վերաբերում է սույն օրենքով սահմանված կարգով վավերացված միջազգային պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելուն, բացառությամբ սույն օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի.
- 5) որով նախատեսված է վավերացում»...:

Վերը շարադրվածը վկայում է, որ Հայաստանի Հանրապետության համար կարևոր նշանակություն ունեցող միջազգային պայմանագրերի կնքմանն ուղղված ՀՀ Նախագահի լիազորությունը ենթարկվում է հակակշռման Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանություն իրականացնող ՀՀ Ազգային ժողովի կողմից:

ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ՀՀ Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով ... մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն սույն օրենքով Ազգային ժողովի վավերացմանը ենթակա ստորագրված միջազգային պայմանագիրը նախապես պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան:

Ազգային ժողովի վավերացմանը ենթակա միջազգային պայմանագիրը օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ պայմանագրում ամրագրված պարտավորությունները Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու համար...:

Սահմանադրական դատարանի որոշումը ստանալուց հետո, եթե դրանով սահմանվում է, որ տվյալ միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հանրապետության Նախագահը տվյալ պայմանագիրը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը ...:

Այսինքն, ՀՀ Նախագահի՝ միջազգային պայմանագրեր կնքելու /հետևաբար նաև՝ այդ պայմանագրերի կնքմանն ուղղված գործողությունների/ նկատմամբ դատական վերահսկողությունն իրականացվում է ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից:

Ամբողջ վերոշարադրյալի հիմքով Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարում վարչական դատարանի եզրահանգումն առ այն, որ «միջազգային պայմանագրեր կնքելու և դրանց շուրջ բանակցություններ վարելու Հանրապետության Նախագահի լիազորության իրագործման միջոցով պետության արտաքին քաղաքականության ղեկավարման գործառույթը և դրանից բխող առանձին

գործողությունները ենթակա չեն վարչադատական վերահսկողության, դրանք ենթարկվում են զսպման և հակակշռման ուրույն կառուցակարգերով»:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը ևս գտնում է, որ ներկայացված պահանջը ենթակա չէ ՀՀ վարչական դատարանում քննության, ուստի իրավաչափ է ՀՀ վարչական դատարանի կողմից 2013 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ՝ մինչև 2014 թվականի հունվարի 7-ը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, հայցադիմումի ընդունումը մերժելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 140-րդ, 141-րդ, 144-146-րդ, 148-րդ, 153-րդ և 156-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը,

### Ո Ր Ո Շ Ե Ց

«Հելսինկյան Զաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության բողոքը մերժել՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 27.11.2013 թվականի թիվ ՎԴ/10973/05/13 վարչական գործով կայացված որոշումը թողնելով անփոփոխ:

Որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից հնգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝



Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ